ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2025 թվականի № 7

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԼԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ՆԳ նախարարի 05.01.2024 թ. 1-Լ հրամանը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2024 թ. դեկտեմբերի 12-ի № 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել՝ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանությունում պաշտոնների նշանակվելու նպատակով ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացի համալիր քննության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

«ՀԱՎԵԼՎԱԾ»

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի

«01» 04. 2025 թ. թիվ 7 որոշման

ԿԱՐԳ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԼԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանությունում պաշտոնների նշանակվելու նպատակով ոստիկանության ծառայողների վերապատրաստման դասընթացի ավարտական փուլի՝ համալիր քննության (այսուհետ՝ համալիր քննություն) կազմակերպման և անցկացման ընթացակարգերը:

1.2. Համալիր քննությունն անցկացվում է «Օպերատիվ-հետախուզական գործունեություն», «Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության տեղեկատվական ապահովումը և փաստաթղթավորումը», «Գաղտնի գործավարություն», «Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության մարտավարությունը» առարկաներից:

2. ՀԱՄԱԼԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Համալիր քննությունը անցկացվում է սույն կարգի 1.2 կետով նախատեսված առարկաներից մասնագետներով համալրված դասախոսական կազմի (այսուհետ՝ դասախոսական կազմ) կողմից:

2.2. Դասախոսական կազմը ձևավորում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի հրամանով:

2.3. Դասախոսական կազմի անդամները պետք է ունենան գաղտնիության առնվազն երկրորդ կարգի թույլտվություն՝ գաղտնիության դրոշմագիր ունեցող թեստով անցկացվող թեստավորման արդյունքները, գաղտնի առարկաներից տեսական հարցերի պատասխանները գնահատելու համար:

2.4. Համալիր քննության ժամանակացույցը՝ ըստ օրերի և դասակների (խմբերի), հաստատվում է Կրթահամալիրի ռեկտորի կողմից:

2.5. Համալիր քննությունն անցկացվում է բանավոր և թեստավորման ձևով (թղթային)՝ տոմսերի միջոցով: Յուրաքանչյուր տոմս բովանդակում է տեսական երկու հարց, ընդ որում՝ մեկ հարց «Օպերատիվ-հետախուզական գործունություն»

առարկայից, մեկ հարց՝ «Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության մարտավարությունը» առարկայից, և 20 առաջադրանք պարունակող թեստ՝ «Ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության տեղեկատվական ապահովումը և փաստաթղթավորումը», «Գաղտնի գործավարություն» առարկաներից:

2.6. Գաղտնիության դրոշմագիր ունեցող թեստեր պատրաստելը, թեստավորման ժամանակ դրանք օգտագործելը, լրացված թեստերը ստուգելը, ստուգված թեստերի հետագա պահպանումը և ոչնչացումը կատարվում են գաղտնի գործավարության կանոններին համապատասխան: Թղթային եղանակով անցկացվող թեստավորման ժամանակ օգտագործվող՝ գաղտնիության դրոշմագիր ունեցող թեստերը Կրթահամալիրի քարտուղարությունից ստանում է դասախոսական կազմի՝ գաղտնիության երկրորդ կարգի թույլտվություն ունեցող անդամը, ով թեստավորման ավարտից հետո ստուգված թեստերը վերադարձնում է Կրթահամալիրի քարտուղարություն:

2.7. Համալիր քննության հարցաշարը, տոմսերը, թեստերը և դրանց հիմքում ընկած իրավական ակտերի ցանկը, հաստատվում են ամբիոնների նիստում: Համալիր քննության հարցաշարը և իրավական ակտերը սովորողներին տրամադրվում են համալիր քննությունից առնվազն երկու շաբաթ առաջ:

2.8. Համալիր քննությանը ներկայացած սովորողի նույնականացումը կատարվում է սովորողի անձը հաստատող փաստաթղթի միջոցով:

2.9. Համալիր քննության անցկացման ընթացքում քննասենյակում կարող են միաժամանակ գտնվել առավելագույնը 5 սովորող:

2.10. Համալիր քննությանը ներկայացած սովորողն ընտրում է տոմսը, որի հետ միասին սովորողին տրվում է նաև համապատասխան թեստը: Պատրաստվելու համար նրան տրամադրվում է առնվազն 30 րոպե: Տոմս փոխելն արգելվում է: Պատասխանին պատրաստվելիս նշումներ կատարելու համար հանձնաժողովը սովորողին տրամադրում է կնքված թերթիկներ:

2.11. Դասախոսական կազմում ընդգրկված անդամն իրավունք ունի սովորողի գիտելիքները, կարողությունները և հմտությունները գնահատելու համար նրան տալ ճշգրտող և լրացուցիչ հարցեր՝ համալիր քննության հարցաշարի սահմաններում:

2.12. Սովորողն իրավունք ունի համալիր քննության ավարտից հետո դասախոսական կազմից ստանալ բանավոր պարզաբանում գնահատման չափանիշների վերաբերյալ:

2.13. Սովորողը պարտավոր է՝

1) համալիր քննությանը ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով.

2) դասախոսական կազմի և այլ սովորողների նկատմամբ դրսևորել հարգալից վերաբերմունք.

3) պահպանել գաղտնիության ռեժիմը:

2.14. Սովորողին արգելվում է՝

1) քննական սենյակ մուտք գործել բջջային հեռախոսով, այլ էլեկտրոնային սարքերով, տեխնիկական միջոցներով, ուսումնական նյութերով կամ ծածկագրերով, ինչպես նաև օգտվել դրանցից.

2) հաղորդակցվել այլ սովորողների հետ, միմյանց փոխանցել տոմսերը կամ նշումների համար դասախոսի կողմից տրամադրված թերթիկները.

3) աղմկել կամ այլ կերպ խոչընդոտել համալիր քննության անցկացմանը.

4) քննական սենյակից դուրս հանել կնքված թերթիկները կամ թեստը:
2.15. Սովորողի կողմից համալիր քննության կարգի խախտում է համարվում համալիր քննության ընթացքում հետևյալ արարքներից առնվազն մեկի կատարումը՝
1) քննական սենյակ մուտք գործել բջջային հեռախոսով, այլ էլեկտրոնային սարքերով, տեխնիկական միջոցներով, ուսումնական նյութերով կամ ծածկագրերով.
2) բջջային հեռախոսից, այլ էլեկտրոնային սարքերից, տեխնիկական միջոցներից, ուսումնական նյութերից կամ ծածկագրերից օգտվելը,
3) այլ սովորողների հետ հաղորդակցվելը, տոմսերը կամ նշումների համար տրամադրված թերթիկները այլ սովորողներին փոխանցելը,
4) աղմկելը կամ այլ կերպ համալիր քննության անցկացմանը խոչընդոտելը,
5) քննական հանձնաժողովի անդամների կամ այլ սովորողների նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը,
6) քննական սենյակից կնքված թերթիկները կամ թեստը դուրս հանելը,
7) գաղտնիության ռեժիմը խախտելը:
2.16. Եթե դասախոսական կազմի անդամը հայտնաբերում է, որ պատասխանին պատրաստվող կամ պատասխանող սովորողը թույլ է տվել համալիր քննության կարգի խախտում, ապա նա, հաշվի առնելով սովորողի արարքի ազդեցությունը համալիր քննության բնականոն ընթացքի, ինչպես նաև սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման օբյեկտիվության վրա, դադարեցնում է համալիր քննությանը տվյալ սովորողի մասնակցությունը կամ նախազգուշացնում այն մասին, որ երկրորդ անգամ խախտում թույլ տալու դեպքում նրա մասնակցությունը համալիր քննությանը կդադարեցվի:
2.17. Համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու մասին կազմվում է արձանագրություն: Արձանագրության մեջ նշվում է համալիր քննության անցկացման օրը, դասակը (խումբը), սովորողի անունը, հայրանունը և ազգանունը, համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու հիմքը: Արձանագրությունը ստորագրվում է դասախոսական կազմի անդամի և սովորողի կողմից: Սովորողի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում համապատասխան նշում է կատարվում արձանագրության մեջ:
2.18. Եթե սովորողի արարքն իր մեջ գաղտնիության ռեժիմի խախտում է պարունակում, ապա դադարեցվում է համալիր քննությանը տվյալ սովորողի մասնակցությունը և արձանագրության մեջ այդ փաստն ամրագրելուց հետո, զեկուցագիր (դիմում) է ներկայացվում Կրթահամալիրի ռեկտորին:
2.19. Համալիր քննությանը սովորողի մասնակցությունը դադարեցնելու դեպքում քննական տեղեկագրում որպես գնահատական ամրագրվում է 0 միավորը:

3. ՀԱՄԱԼԻՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

3.1. Համալիր քննության արդյունքները գնահատվում են 20 միավորային համակարգով՝ հետևյալ սանդղակով.

գնահատականը թվերով	**գնահատականը տառերով**
0-7	անբավարար
8-12	բավարար

13-17	լավ
18-20	գերազանց

3.2. Համալիր քննության գնահատականը ձևավորվում է տոմսում բովանդակվող տեսական հարցերի և թեստի պատասխանների գնահատականների հանրագումարից: Տեսական յուրաքանչյուր հարցի պատասխան առավելագույնը գնահատվում է 5 միավոր՝ 1 գնահատման քայլով: Թեստային առաջադրանքների պատասխանը առավելագույնը գնահատվում է 10 միավոր՝ յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը 0,5 գնահատման քայլով: Եթե տոմսի տեսական հարցերի և թեստի պատասխանների գնահատականների հանրագումարը կազմում է ոչ ամբողջական թիվ, ապա կլորացվում է հաջորդ ամբողջական թվով: Համալիր քննությանն անհարգելի չներկայանալը հավասարվում է անբավարար գնահատականի՝ 0 միավոր:
3.3. Համալիր քննության գնահատականը ամրագրվում է համալիր քննության տեղեկագրում և հայտարարվում սովորողին՝ նրա պատասխանը լսելուց և թեստի արդյունքները ստուգելուց հետո:
3.4. Համալիր քննությունից բավարար և ավելի բարձր գնահատական ստացած սովորողներին տրվում է վերապատրաստման վկայական:
3.5. Համալիր քննությունից անբավարար գնահատական ստացած կամ անհարգելի չներկայացած սովորողը՝ այդ պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում Կրթահամալիրի պետին ներկայացնում է զեկուցագիր՝ քննությունը վերահանձնելու խնդրանքով: Կրթահամալիրի ռեկտորի կողմից վերահանձնումը թույլ տալու դեպքում՝ քննությունն անցկացվում է անբավարար գնահատական ստանալու կամ քննությանն անհարգելի չներկայանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: